

Ընկերութեան մէջ կ'առնուէին ամէն կարգի հայ առևտրականներ, որոնք տուրք մը կը վճարէին: Եկամուտները կը յատկացուէին եղբայրութեան պէտքերուն, ու աւելցածն ալ եկեղեցական ու բարեգործական նպատակներուն: Ամէն տարի ընդհանուր ժողով կ'ըլլար՝ ուր կ'ընդունուէին նոր անդամները եւ կ'ընտրուէին վարիչները, — նախագահ, եւ վագահները: Ընկերութիւնը ստացած էր պետական արտօնութիւն:

Վաճառականաց եղբայրութիւնն էր որ 1799-ին Ս. Լուսաւորչի խորանը կանգնեց Մայր Եկեղեցւոյ մէջ: Գրիգոր Լուսաւորիչն էր անոր պաշտպան սուրբը:

Ընկերութիւնն ունէր իր մասնաւոր քահանան:

Ընկերութիւնը մեծաքանակ ապրանք բերել կուտար Վիէնայէն ու Փէշթայէն ու կը ծախէր պզտիկ շահով մը:

Ընկերութեան արձանագրութիւնները մինչեւ 1801 հայերէն կ'ըլլային:

Մինչեւ 1830 հայ վաճառականները հայերէն կը բռնէին իրենց հաշիւները: Նոյն թուականին արգիլուեցաւ այս բանը, թէեւ հայերը բողոքեցին բսխով որ ոչ վաճառականները, ոչ աշկերտները եւ ոչ ալ պարտապաններ ուրիշ լեզու գիտեն հայերէնէն գատ:

1845-ին ընկերութիւնը Վիեննայէն բերել տուաւ նոր դրօշ մը՝ դամասկեան ծանր մետաքսէ շինուած: Մէկ երեսին վրայ նկարուած էր՝ մէջտեղը Ս. Գրիգոր Լուսաւորիչ, եւ ծայրերը չորս աւետարանները: Միւս կողմը վար վաճառականներու պաշտպան Ս. Վենտելինոս, եւ չորս ծայրերը՝ Ս. Փլորիանոս, Ս. Յովհաննէս Նեպոմուկ, Ս. Միքայէլ հրեշտակապետ եւ Աւետուհի:

#### ՌՈՒՄԷՆ ՓՐՈՅԵՍՈՐԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Փրոֆ. Տոքթ. Ի. Ն. Անճէլէսըու Ռումանիոյ տնտեսական կեանքը ուսումնասիրած ատեն (Histoire Economique des Roumains, հատ. Ա. Ժրնեւ, 1920, էջ 238-244) չի մոռնար ի վեր հանել հայոց դերը Ռումանիոյ տնտեսական զարգացման մէջ: Նոյնութեամբ կուտանք հայոց վերաբերեալ մասը իրբեւ ամբողջական ակնարկ մը՝ որ լրիւ կը ներկայացնէ հայոց դերը իրբեւ առևտրական տարրը, պատմուած

ուսմէն շատ յայտնի մասնագէտի մը կողմէ:

Ահա իր ակնարկը. —

«Եթէ ուսմէնները, իրենց հին առևտրական փառքի զազաթնակէտի միջոցին, կրցած են հեռաւոր շրջաններ հասնիլ, Սեւ ծովու բոլոր եղբրքները ճանչնալ եւ նոյնիսկ Նեղուցներէն անցնիլ դէպի Միջերկրական, խալալցիներուն չէ որ կը պարտին այդ բանը, այլ ատ կըրցած են շնորհիւ Արեւելքը լաւ ճանչցող ուրիշ վաճառականներու, — հայերուն: Անոնք մեծ դեր կը խաղան ուսմէն վաճառականութեան սկզբնական քայլերուն, եւ ուսմէն քաղաքներու բնակչութեան կազմութեան մէջ: Ուրեմն աւելի մօտէն անհրաժեշտ է զբաղիլ անոնց դոյութեան իրաւունքով ուսմէն քաղաքներու եւ առհասարակ ուսմանական երկիրներու տնտեսական կեանքին մէջ:

«Հայերը մեր երկիրը եկած են բազմաթիւ անդամներով, բայց անոնք որ ամենամեծ ազդեցութիւնը ունեցան ուսմէն առևտուրին վերայ անոնք են որ եկան քաղաքներու կազմութեան առաջին շրջաններուն: Հին ժողովուրդ մըն էր աս, ազգային աւանդութիւններով՝ պահպանուած բազմաթիւ թերութիւններու հետ միասին, որոշ աստիճանի քաղաքակրթութեամբ մը որ աւելի բարձր էր քան այն որ դոյութիւնն ունէր ուսմէն շրջաններու մէջ, պետական կեանքի եւ մանաւանդ առևտրական կեանքի երկար փորձառութեամբ: Հարաւային Կովկասի շրջանէն եւ Տիգրիսի ու Եփրատի ափերէն կուգան անոնք: Իրենց ծագումը ասիական չէ, այլ եւրոպական: Արիական ցեղէն եւ մաս կը կազմեն քրակներուն, որոնք երբեմն տարածուած էին Եւրոպայի ամբողջ արեւելքը, մեզ ծանօթ ամենէն հին նախահայերը այն ժողովուրդներուն որոնց մաս կը կազմենք մենք: Սեմական ասիական ցեղերու մարումէն յետոյ, թրակները, կուտելով սկիւթացիներուն դէմ կը տարածուին Սեւ ծովու հարաւակողմը մինչեւ Կովկաս եւ կը դրաւեն ամբողջ Փոքր Ասիան, միշտ հետզհետէ աւելի ամրապնդուելով Քրիստոսէ առաջ եօթերորդ դարուն: Ոչ պարսիկներու վաղանցուկ տիրապետութիւնը, ոչ Մեծն Աղեքսանդրի աւելի վաղանցուկ կայսրութիւնը, չկրցան անէացնիլ թրակեան բնակչութիւնը իրբերներու կամ իվերներու ինչպէս կ'ան-